

Ա.ՄԱՆՈՒԻ ՀԱՆԴԵՍ ԺԱՌԱՆԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Յունուար ամիսը ամենէն ուրախ ամիսն է Ս. Աթոռոյս ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ուսանողութեան համար: Ամսոյն առաջին օրերուն վերջ կը գտննի Կիսամեծայ Քննութիւնները եւ Աւագ Տօներուն նեա յորոնք բացառիկ չու բրովզ կը տօնուին երուսաղէմի մէջ, անոնցմէ առաջինն ու վերջինը Ս. Աթոռոյս պաշտպան ուրբերու տօնը ըլլալուն) կը սկսի գարցական արձակուրդը, որ Կ'ընզգրէկ մեծագոյն մասը ամսոյն (23-24 օր) եւ Կ'աւարտի Ծննդեան Աթօրէքէն ետք, Յովիհաննու Կարապետի ծննդեան տօնին: Այդ շրջանին մէջ Կ'իյնայ տօնը Քրիստոնէութեան անդրանիկ մարտիրոս Ս. Ստեփանոսի, որ տօնն է մեր Սարկաւագ եւ Աւարակիր սաներուն, ուր անոնք, բացի եկեղեցական հոգեպարար հանդիսութենէն, երեկոյեան կը վայելին սեղանակութիւնը Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Միարանութեան անդամներուն եւ ուսուցչական կազմին: Խոկ Ծննդեան ութօրէից մէջ աշակերտներ Կ'ուննանան իրենց ծմեռնային պայութը, որ այս տարի բացառարար զանց առնեւցաւ, խիստ աննպաստ եղանակին պատճառաւ: Սակայ շրջանին ամենէն ուրախ օրը կը մնայ Ամանորը, զոր հոս, հարկադրաբար — չմոռնալ Ս. Տեղեաց իրաւակարգը — Հին Տօմարին կառչած մնալու ստիպուանութեամբ, կը տօննեք Յունուարի 14ին:

Պատրաստութիւնները կը տեևն բանի մր օք: Սարհեր կը զարդարուի վայելէօքին: Կը շակուի տօնածառը: Մաներ մեծ ոգեսորութեամբ կը հնետելին երդի եւ արտասանութեան փորձերուն: Եւ երբ Օրացոյցին վոյա կ'երեւի 13 թիւր, տղօց խանդակառութիւնը կը հանի իր գագաթնակէտին:

Այս տարի, ուսանողութեան սահմանափակ թիւին պատճառաւ (Միջին Արեւելքի բաղաբական վիճակը թոյլատու չեղաւ որ միջնուները փոխարինուէին նորերով), հանդիսութիւնը կայացա Վարժարանի հաշարահին մէջ: Հինգշաբթի երեկոյեան ժամը 7ին, երբ Ս. Պատրիարքն ու Միարանութիւնը մուտք գործեցին սրահ, զիմանորուցան «Սիրտ ի սիրտ»՝ Վարժարանի բայիշերով: Փոխ-Տեսուչ Ալեքս Սրկ. Գալայիննան ըրաւ բացման խօսքը: Ժառանգաւոր սաներ, դաշնակի ըլկերակցութեամբ եւ րոպական Զայնագրութեան ուսուցիչ Տիար Վահէ Գալայիննանի, երգեցին Ալ. Հէքիմեանէ դաշնաւուած ու ուրուած «Էջմիածին» երգը, որմէ ետք նեղվարդի «Ասկի Կամարը ապրումով արտասանեց ժառանգը» առաջնանան: Արամ Սրկ. Ալճաննան իր աղոյ ծայնով մեներգեց «Փարուն Հայունիքրոյ, նմանապէս դաշնաւորուած Ալ. Հէքիմեանէ եւ դաշնակի ընկերակցութեամբ Պր. Վահէի: Փոխ-Տեսուչ Սարկաւագը ընթերցաւ Ալ. Հատաշ նմանի Ամանորի երեկոյեան մը ներշնչումին տակ զրուած «Վասենիք լոյսերը» կտորը: Ժառանգաներու կողմէ, Եղուարդ Յակոբեանէ դաշնաւորուած «Հայաստան, ապրիր յաւիտեան» խմբրողի կատարումը փակեց յայտագրին գեղարուեստական բաժինը: Ներկաները, ուրոնց կարգին էին ուսուցիչներէ բացի նաև Ս. Աթոռոյս պաշտօնեաներ, խանդակին: ծափերով արտայատեցին իրենց գոհունակութիւնը ծեռք բիրուած արդիւնքին դիմացն:

Կաղանդ Պապուկի ժամանումով սկսաւ երկրորդ մասը յայտագրին: Կարմիր ուլայն իր պարեգոստով եւ ալեփառ մօրու բոլ՝ ան բոլորէն ալ խեց զուարթ բրբիները Բայինելէ եսք մեծ վարպետութեամբ պատրաստուած բանաւոր իր կաղանդէքները, ան իր նիւթական կաղանդէքներէն բաժին հանեց բոլորին: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը իր փակման խօսքին մէջ անդրադառաւ ժամանակ լացքին եւ շեշտեց զայն յաւագոյն արդիւնաւորելու եւ արժեւորելու կարեւորութիւնը: Ժամ մը տեւող այս հանդիսութիւնը վերջ գտաւ միաբերան երգուած Տէրունական Աղօթքի երգեցողութեամբ: